

որ աս ալ կը լմըննայ՝ վերի քիթն  
ալ նոյնպէս կը հալեցընեն . բայց ա-  
սիկայ զատ զատ կ'ըլլայ, և քիչ մը կո-  
նոնաձե. յետոյ կ'առնեն ձրագներուն  
գաւազանները, և բացօթեայ տեղ մը  
կը կախեն որ աղէկ մը չորնան ու ձեր-  
մըկին :

(ի) որ ձրագուին մէջ որոշ չափով  
մը (որ փորձով կ'իմացուի) հնդկաս-  
տանի շագանակի՝ փոշի էն խառնելու  
ըլլաս, մոմին լսու խիստ պայծառ  
կ'ըլլայ, ամենեին մուխ չհաներ ու  
չվազեր, և վառելու ատեն անոյշ հոտ  
մըն ալ կը բուրէ :

Դ' արդիւ ճերմէջնէլուն իւրպէ : —  
Ինչպէս որ վերն ըսինք, սովորական  
կերպը աս է որ ձրագները բաց տեղ  
մը կը կախեն՝ ցօղի ու պարզի մէջ,  
միայն կը նային որ վրանին արև ը-  
զարնէ : Հոս դնենք ձրագը քլորով՝  
Ճերմը կցընելուն կերպը :

Փայտէ մեծկակ մնտուկ մը շինել  
տուր ու ձրագները մէջի ճանկերէն  
կախէ, անսանկ որ ոչ մէկմէկու և ոչ  
մնտուկին դրացին : Ետքը մնտուկին  
ամէն ծակերն ու ճեղքերը աղէկ մը  
գոցէ ներսէն դրսէն թղթեր կպցը-  
նելով. մնտուկին խուփն ալ գոցէ ու  
չորս դին հաստ կտաւ մը կալցուր :  
Ո՞էկ բթաչափ կլոր ծակ մը բաց, ու  
մէջը ապակիէ կամ յախճապակէ խո-  
ղովակ մը անցընելով՝ ծակին բոլորտի  
քը աղէկ մը ծեփէ. իսկ խողովակին  
միւս ծայրը ան ամանին հաղորդէ՝ ո-  
րուն մէջ քլորը ջրով ու ծծմբային թը  
թուուտով պիտի լուծես : (ի) որ կ'ու-  
զես՝ մնտուկին վրայ պղտիկ պատու-  
հան մըն ալ կրնաս շինել՝ ութը կամ  
տասը բթաչափ մեծութեամք. ասոր  
վրայ Ճերմակ ապակի մը անցընելու  
ու բոլորտիքը աղէկ մը ծեփելու է :  
Շատ անգամ աս գործիքով 24 ժա-  
մունան մէջ ձրագները խիստ աղէկ կը  
Ճերմըկին :

1 Գ. Պ. Marron d'Inde.

2 Գ. Պ. Chlore.

## ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՎԱԴՐՈՒԹԻՒՆ

Յաղագու օգտակարութեանց և չափու-  
թագերական հանդիսից :

Ի՞նդ ամենայն կարեորաց 'ի զար-  
գացումն ազգի՝ յանցիատակ ժամա-  
նակաց հետէ և ամենայն ազգք բար-  
գաւաճեալք յիմաստութեան՝ կա-  
րեոր գատեցին զքերթողութիւնս  
թատերականս . յորս ոչ եթէ միայն  
իբր 'ի պատկերի նկարագրէ քերթողն  
զաւաքինութիւնս և զթերութիւնս  
մարդկան և զկիրս, այլ և զարսն զայ-  
նոսիկ՝ որք առաքինութեանց այնոցիկ  
և թերութեանց տեարք իցեն, ա-  
ռեալածէ 'ի մէջ կենդանիս, որք ինք-  
նին յանդիման ցուցանեն զգործս իւ-  
րեանց զառաքինիս և զմոլեկանս, և  
զհատուցումն վարձուցն և տուգանաց  
անդէն առեալ խնդան, և կամ 'ի  
զեղջեյապաշաւնստին : Այս չէ շատ-  
այլ և զոր 'ի բնութեան ոչ տեսանեմք՝  
զինորհուրդս մոտաց մարդկան զառա-  
քինեացն և զմոլելոց, եթէ զինչ 'ի  
խիզնս մտացն և 'ի սրտին զգայցէ այր  
այր 'ի բարեգործելն կամ 'ի զառա-  
ծանել 'ի չարիս, յայս ազգ քերթուա-  
ծոց ամենայնն մերկապարանոց կայ 'ի  
կենդանի մարդիկն . և թէ որպէս նո-  
քայաձախ ոչ զոր ունին 'ի սրտի 'հա-  
զորդեն այլոց, այլ բազում ինչ ընդ  
պատրուակաւ, մանաւանդ յորժամ 'ի  
կրից առաջնորդիցին : Արքն այնոքիկ  
կենդանացեալք 'ի խրատ հանդիսա-

1 Աս հարկաւոր ճառը յառաջարան է նորատիպ  
թատրերգութեանց որ հետ զհետէ պիտի հրա-  
տարակուին գրաբառ, ոմանկք ալ աշխարհաբառ:  
Կ'ուզէինք օրագրիս մէջ տոպագրէլ ան խազերը.  
բայց անոնց երկայնութիւնը անկարեց էր աս թեր-  
թերուս մէջ ամփոփել . թող որ կողմանը ա-  
նոնց ոյժն ու համն ալ կը կորսուէր . անոր համար  
ոչ միայն զանոնք զատ կը տպանք, հապա նաև ա-  
յառաջարանական տեղեկութիւնը համառօտելով  
կը գնենք հոս :

կանաց ամենեցուն, կենցաղավարին ընդ միմեանս՝ որպէս մեքսյաշխարհի։ Ի՞այց գաղտնիք մերոցս սրտից՝ միայն լուսուծոյ գոլովլյայտնիք, և զոր մեզ թուին պատշաճականք՝ զայն և Եթիաղորդեմք այլոց։ իսկ սոքա զհանդիսականան ունին ամենայնխորհրդոց մտացն և սրտից հաղորդս, գոգցես իմ այնպէս՝ որպէս մեքս իցեմք անմարմական հոգեղինացն յանդիման։ իբր զի հանդիսականքն արտաքոյ համարին տեսարանին յորում կան արքն այնոքիկ կենդանացեալք ըստ կամ քերթողին, և ամենեին ոչ ինչ քան է սոցա ընդ նոսա։ միայն՝ ի խրատ լողացն մերկանան առաջի նոցա զամենայն զյօժարութիւն մտացն, զկամս, զխորհուրդս ծածուկս, և զխիղձս յորոց տագնապին՝ ի գաղտնիս՝ ի դէմն զուարթութիւն բերեալ։ և կամ ընդ հակառակն՝ եթէ՝ ի խղձին բերկրեալ, և առ մարդիկ վշտացեալս համարին։ Տեսանի անդէն՝ եթէ՝ որպէս պատրուակյամենայնի առնուն մարդիկ զառաքինութիւն, և՝ ի մսել անդ՝ ի չարիս՝ զպէտս ինչ և զիրաւունս բաղրաղեն։ Այս այս յայտնութիւն գործոց և ներքին խորհրդոց՝ ոչ միոյ ուրուք է անդանօր, և ոչ տասանց ումանց, այլ անթիւ անհամար որերոյ։ ոչ միայն քաղաքակցացն կամ ազգին, այլ և ամենայն աշխարհի մարդկան։ ոչ սերկեան ժողովելոցն, կամ ժամանակցաց այնր դարու, այլ՝ ի սկզբանէ աշխարհի և այսր եղելոց մարդկան, ընդ ամենայն ոլորտս երկրի։ Այդ քանի խտիր է ընդ մարդ՝ որ սակաւօրեայ կենօք կեայ՝ ի տան և յաշխարհին իւրում, և ընդ այր որ զամս\* կենացն հաշուէ՝ ի սկզբանէ աշխարհի և այսր՝ վեցիւք հազարօք ուրեմն զամսն չափեալ, և տուն բնակութեան անձին զոլորտս երկրի ունելով, և քան զլուրամազգայ զառասպելեալ զընթացսն՝ ի գագաթունս լերանց զոտնափոխսն առնելով։ Քանզի սա յանկարծ՝ ի նոյն՝ ի նմին ժամու ընդ հինդ մասունս աշխարհի պարայածի։ և ոչ այսու շա-

տացեալ, և զամենայն զհնոց ժամանակաց զաշխարհիս, զքաղաքս և զամուրս յոտին՝ որպէս էինն յայնժամանակ՝ տեսանէ, և ընդ մարդկան ամենայն աշխարհաց և գարուց լինի կենցաղակից։ և ոչ միայն ընդ վիճակակցացն իւրոց արանց, այլ ընդ ամենայն առն մահկանացուի՝ որոյ շունչ յըռնգունս լեալ իցէ։ Այտանէ համարձակ առդիւցազունս հրամանատարս աշխարհի, առ թագաւորս, կայսերս, նահապետս, և առ բռնակալս՝ որոցյանդիման չեր ումեք համարձակելի երեել։ սա երթեալ կայ առ նոսա, քննէ զամենայն արարուածս նոցա, լսէ և զամենայն գաղտնիս մտաց նոցա և զծածկեալ յօժարութիւնս սըրտից նոցին, և թէ զիարդ՝ ի սպառնալ անդ այլոց և՝ ի հրամայելնոցա, և՝ ի կարծեցուցանել եթէ ամենայն ցանկութիւն կամաց իւրեանց կատարիցի, տեսանէ զնոցա խորհրդոցն զանհնարին տագնապ և զտանջանս։ Անցանէ անտի առ թշուառացեալս աշխարհի։ իջանէ ի բանտս չարագործաց, տեսանէ և զնոցա զխիղձս մտաց, ի միտ առնու զի է երբէք և անմեղաց մտանել՝ ի տանջանարանս փոխանակ մեղապարտաց։ Այլանէ յանմարդաբնակի ի բազմավտանգ վայրս, ինքն աներկիւղ գոլով ամենայնիւ։ մունէ՝ ի պատերազմունս, միտ՝ ի սաստկացեալ ճակատամարտս։ ելեալ կայ՝ ի վերայ պարսպաց ընդ տարափով նետից, քարանց և ոմքացն հրազինուց, և՝ ի զնին կայ անկանելց ի հիմանց ամրակառոյց բերդից և պարսպաց, և՝ ի խրամատսն՝ ի մէջ արեանց գետահետեալ հոսելոց։ և ինքն անվնաս՝ վշտանայ ընդ ազետալիսն, և ինդայ ընդ բերկրականս, և յայնմամենայնի ուսանի՝ ի չափու զանձն ունել։ Այս զորս յիշեցից յանթիւ գործոց անտի յանցելոցն և որք լինին։ սա ամենայնի տեղեալ, ամենայնի առաջիկայ, ամենայնին ընտել։ ոչ ինչ առաջի նորա ծածկեալ կայ յերեսս երկրի և՝ ի խորհրդոցս մարդկան։ Այսպէս ամե-

նատես ոք է , ո՞ղ վայել է լինել պատկերին Աստուծոց , բազմադարեանդ այդ մարդ , որ 'ի ժողովս թատերական քերթութեանց ձեմիցի : Վկերակատար արուեստին , և բազմաշահուսմանն :

Հետ ամենայնի տեսանէ մարդ և զանձն իւր իւր ՚ի հայելո՞յ 'ի թատերական տեսարանին , և զհոգւոյիւրոյ զխորհուրդս անպատրուակն նկատէ , այնպէս զի որ յառաջն յանձնասիրութեանն ախտէն խաթեալ մոլորէր , յայնմչետէ սկսանի ձանացել զանձն : Եւ զոր առնէ ինքն և զոր կրէ յանձին , և թէ յո կամ յինչ ինչ դիմէ յօժարամտեալ , և եթէ յինչ վախճան յանկեսցին իրքն , զայն ամենայն ձշդիւ գտակաւ տեսեալ 'ի միտ առնու . և խրատեալ ուսանի զոր ինչ պարտն իցէ առնել յետ այնորիկ . և ոչ ոք իմանայ զխորհուրդս մտաց նը :

Այս ամենայն արգասիք են թատերական քերթուածոց : Եւ ո՞ք երբէք ոչ հիացեալ սքանչասցի , լուեալ եթէ է յաշխարհի այսպիսի իմն արուեստ՝ որ զմարդ տկար և սակաւժամանակեան այսպէս կարող և սքանչելահրաշ գործիցէ : Այսմամենայնի աւասիկ քաջիւլամուտ գոլով գերածայրեալքն յաշխարհի ուսմամբ գիտութեանց և ամենայն կենցաղական հրահանգօք ազինք , հելլենք ասեմ և հուովմայեցիք , և որք ըստ նոցանէ այժմուս բարգաւաճագոյն ժողովուրդք Եւրոպայ , մտադիւր յօժարութեամբ թեակոխեցին 'ի յաճախել և զայս ազգ քերթուածոց :

Իմն և առ մերովքն արշակունի թագաւորօք թատերական տեսարանք , յորս արքայորդւոյն Արտաւազդայ 'ի հանդէս անցանեին ողըերգակ և վսեմիմաստիցն նկարագիրք , որպէս երաշխաւորէ մեզ Պլուտարքոս . այլ աւաղ , հանդերձ այլովն ամենայնիւ և այնր պարծանաց վայելք և սփոփութիւն կապտեցան զերծան 'ի մէնջ անդառնալի :

Իսկ զարդիս մինչդեռ վերստին

սկսանի ազգ մեր զսիրով ուսումնական հրահանգաց և կենցաղօգուտ յառաջադիմութեան գալ , և խաղաղաւէտ անդորրութեամբ 'ի խնամն տերանցն և 'ի սէր իրերաց վայելել , կամ եղել և մեզ տալնմա զՃաշակ և զայսր ազգի քերթութեան , զի մի և յայսմյետ նեալ մնասցէ քան զայլ յազգաց :

Ակայն որպէս զի առաւել բազմարդիւն այս ուսումն յազգինմերում լինիցի , յառաջ քան զմատչելն 'ի գործ 'ի քնին արկցուք սուղբանիւ , ան , զօգտութիւնս թատերական բանահիւսութեանց . թ , զգիտումն յառաջ պայցեն :

( )գտութիւնք թատերական քերթողութեանց բազմազգի են , մարթէ ասել և ամենազգի , միայն եթէ ըստ օրինի լինիցի , և կարգեալ 'ի վախճանն ուղիղ՝ զորմէ զկնի : Ամդ

Ա . Կախաւորագոյն յօգուտս նոցին են բարոյականին հրահանգք . քանզի սոքա ձեռն կարկառեալ ունկնդրացն ինդութեամբ , զուարթութեամբ ածեն 'ի ձանապարհն ուղղութեան , զամենայն ազգի մոլութեանց զըարիս հրապարակեալ ցուցանեն . զմանկահասակս , զերիտասարդս և զծերս միանգամայն յուղղութիւն յորդորեն , առանց զայրացուցանելոյ երթէք զոք , և ոչ զոք թողուն յիւրում խակութեանն :

Բ . ( )գտութիւն մեծ անակնկալ 'ի բարեմարդութեան և 'ի քաղաքականութեան . քանզի թատերական բանահիւսութիւն զամենեսին մարդասէրս գործէ , ընկերականս , հլուս օրինաց և գոհս , և զամենեսին 'ի մի սէր յօդէ , և զազգն ողջոյն 'ի մի գերգաստան ժողովէ . և զհասակացն տարանջատ վիճակ զօդէ 'ի միասին , զծերոյն և զայրացելոյն , զերիտասարդին և զպատանւոյ և զմանկան . այնպէս զի զվայրենական օտարութիւն 'ի բայ

եգեալ, ամենեքին՝ի միասին կենակից գտանին գոհք և հաճք ընդ վայելմն :

Դ. ( ) գտութիւն անչափ՝ի կրթել զմիտս յիմաստութեան, և այն զամենեցուն զմիտս միանդամայն, զմանկան և զերիտասարդին և զծերոյ, յազգի ազգի գիտութիւնս, 'ի պատմականն, յիմաստասիրականն, 'ի չափերականն և 'ի բնաբանականն, և 'ի գեղեցիկ յազատական արուեստուն. այնպէս զի ոչ զոք թողուլ անուսումն և անոպայ ամենելին. զի այսպէս ասացից՝ զիմաստութիւն իմն հեղեալ՝ի միտմն ազդելով, 'ի զրօսեցուցանելանդ և դաստիարակէ :

Դ. Ոյատերական բանահիւսութեանց պէտք և օգտութիւն անչափ է յուսումն քաղաքավարական կենակցութեան, բարեհաձոյ երևելոյ և ընտիր, գիտելով ըստ ժամանակին և ըստ տեղւոյ, զիսօսս պատշաճեցուցանել, ունելով և զբարեվայելուց շարժումն 'ի կալ, 'ի խօսել, 'ի գնալ և 'ի նստել. զհայեցուածս աչաց և զդէմոնն, և բովանդակ իսկ զանձն գլխովին 'ի համապատշաճ դիրս կալեալ ըստ կրիցն յուզման և ըստ բանին իմաստից. այնպէս զի ակներե ցուցանիցի և արտաքուստ եթէ զբանական հոգին զպատկերն Աստուծոյ կրեն մարդիկ յինքեանս :

Ե. Կատարելութիւն լեզուին և խօսից յազգս իւրաքանչիւր : Լուեալ մանկուոյն յաճախ և 'ի բերան ուսեալ զհայեկան շարամանութեան զքաղցր և զվայելքահիւս դարձուածս բանից ընտիր ոձովքն, իբրև 'ի մոմ'ի մատաղ միտմն դրումին նոքին անջնջելի. և այնպէս քաղցրացեալ յուշի նոցաքազմարուեստ դարձուածոց դիւցազնական քաջահանչնող նոյեան լեզուիս, առաւել ևս փութոյ պնդութեամբ զհետ լինին կրթել զանձինս 'ի նոյն. և ըստ լեզուին կատարելութեան՝ միտքն ևս զարդանան 'ի խոկումն. զի որչափ քաղցրաման մտաց բանքն զոր լսէ ոք, նովին չափով յաւետ յօժարամոի և 'ի գործադրու-

թիւն ամենայնի որոց ականջալուրն եղեւ :

Օ այս ամենայն ազգի ազգի օգտութիւնս ցանկալիս թատերական բանահիւսութեանց լուեալ զարմասցի ոք արդեօք, եթէ եր աղագաւ ապա ցարդ ոչ փութացաք յուսումն և 'ի գործադրութիւն այսպիսւոյ օգտամատոյց արուեստի : Դարձեալ և ընդ այն զարմասցի՝ եթէ զի է տպա զի յիւրապէ արդ զօր ամենայն՝ յամենայն 'ի քաղաքս և յաւանս զբազեալք 'ի թատերական յայս տեսարան, և ոչ թուին ամենայնիւ այսքան և այսպիսի օգտից ժառանգորդք : Ի լուծումն կարեոր տարակուսութեանց մատուցեալ, զերկորդն նախ պարզեսցուք զերկմութիւն, որով և զառաջինն գտանիմք պարզեալ :

Մ'եծամեծքն 'ի գործս մարդկան որչափառաւել օգտակարք իցեն, այնչափ ևս առաւելութեամբ ընդ իւրեանս առեալ ածեն վտանգս մեծամեծս : Աւանիկ առաջի աչաց ամենեցուն մեր կան նորահնար գիւտք շոգեշարք մենքենայից . ո՞ կարէ զչափ բարութեանցն թուել զորս երեր ընդ իւր գիւտս այս հանձարաւոր . այլ և վտանգքն որ 'ի գործադրութենէ գիւտիցն որչափ մեծամեծք են և անհրաժեշտք . և քանիօն նախահայեաց զգուշութեան պէտք են առ 'ի զառաջս ունելոյ ամենայն վտանգաց, և առ բազմահմուտ առաջնորդութիւն : Այս յետ այսպիսի և այսչափ զգուշաւորութեանց՝ լին դարձեալ և վնասք ուրեք ուրեք . և զի՞նչ եթէ զկարեոր զգուշութեամբքն զանց առնեին 'յօգուտն միայն վայելել ցանկացեալք . ապաքէն յիրաւի եր յայնժամհամարել զսոյն՝ հնարագիտութիւն իմն առ 'ի ջնջել զազգս մարդկան յերկրէ՝ դառն մահուամբ 'ի հուր զամենեսին դատելով . և ո՞ ի մարդկանէ յանձն առնոյր երթալ մերձհաղորդ օգտութեանն լինել կամեցեալ : Արդ 'ի միտապ զկարեորութիւն գիւտիցն, բայց առ նմին և զպէտս մեծի զգուշու-

թեանն . ապա թէ ոչ , օգուտն այն  
մեծ՝ յևս մեծագոյն փոխի վնաս : Եր-  
թէ՝ ի նիւթականս այսչափ , զի՞նչ ա-  
պա ոք՝ ի բանաւոր պէտս՝ ի կրթու-  
թիւն և՝ ի շահս օգտի մտաց և սրտից  
կարեռը իցեն . այն զի ամենամեծ  
օգտութեանց թատերականս արա-  
րուածոց՝ և մեծամեծ յշժ վտանգքն  
են առընթեր՝ եթէ յանգդոյշ մատչի-  
ցի ոք՝ ի նոսա : Այսպէս ուրեմն առ  
՚ի վայելել յարդիւնս օգտութեանցս  
այսոցիկ թատերական բանահիւսու-  
թեանց , նախ քան զամենայն՝ ի նոյն  
պարտ է զդիտումն ուղղել , և ըստ  
այնմ՝ ի կարգի ունել զամենայն . ապ՝  
եթէ ոչ , բնութիւն մեր յամենայնի՝ ի  
չարն հակամէտ , ուր ուրեք գրդիու  
ինչ ախտիցն գտանիցէ , անդէն մոռա-  
նայ զամենայն զբարութիւնսն մեծա-  
մեծս , որպէս տեսանեմք պատահեալ  
և՝ ի թատերսն . զի առեալ մարդկան  
զգործին , ուսեալ զարուեստն , սա-  
կայն առանց զդիտումն ուղիղ ամե-  
նայնիւ ունելց՝ ոչ ինչ կամ սակաւ  
շահին , այլ յաձախ ևս վնասին չա-  
րաշար : Յայսմ ազգի քերթութեան  
է օգուտ՝ միանգամայն և բերկու-  
թիւն . օգուտն է վախճանն , և զուար-  
ձութիւնն պատահումն և յորդորիչ  
օգտակարութեան իրացն : Արդ եթէ  
ոչ յամենայն օգտութիւնս թատե-  
րացն վայելեն մարդիկ , և եթէ վնա-  
սին ևս յաձախ , ո՞ ոք զպատճառսն  
անգիտասցի . զի առ բազումն՝ ի մարդ-  
կանէ վախճան և դիտումն հանդի-  
սիցս զբօսանքն և բերկութիւն կար-  
ծեալ է . որպէս՝ ի հինան , զօրմէ խօ-  
սին Ասկերերան և այլք , նոյնպէս և  
՚ի նորումն . իսկ օգտութիւնն բազքա-  
ղայք իմն են նոցա ըստ քմաց , որպէս  
զի մի խափանել հասցէ արուեստին ,  
և զրկիցին ինքեանք՝ ի զուարձութեց  
անտի : Ա ասն այնորիկ և արուեստս  
այս՝ գերագոյն՝ ի բարոյականին կըր-  
թութիւն , և աղքեր բազմապատիկ  
օգտից , յամենայն բարեսիրաց մտա-  
ւորաց՝ ոք դիտեն՝ ի գործոյն զվախ-  
ճանն կըռել , ՚ի հինան նաև այժմ

յլուրոպա , իրաւամբք վնասակար դա-  
տեալ է և կորստական . և բազումի-  
մաստուն ծնողք որ անցեալք իցեն ը-  
փորձ չարեաց աշխարհիս , զգուշացու-  
ցանեն զորդիմն մի յաձախել՝ ի զի՞ն  
թատերաց : Այս կարի իսկ յիրա-  
ւունս և սուրբ հարքն մեր նախնիք ,  
որպէս և Յունացն և լատինացոց  
անդադար անգուսնէին և անարդէին  
զթատերս՝ ի խրատս իւրեանց առ ժո-  
ղովուրդս , և զգուշացուցանէին զնո-  
սա յայնցանէ իբրև՝ ի հաղթից և՝ ի  
ծուղակաց՝ որ յանփախուստ ՚ի մահ  
զմարդիկ մատնիցեն . որպէս է տեսա-  
նել՝ ի յորդորակս սրբոյ Ասկերերա-  
նին և՝ ի Անդակունւոյ ձառսն :

Եւ որպէս հնարաւոր էր մեզ ցարդ  
մուծանել և յազգ մեր արուեստի-  
տութիւն իմն այսպիսի , որ յանդէպս  
գործադրութեամբն զատեալ հեռա-  
ցեալ էր ամենայնիւ յիւրմէ վախճա-  
նին , և՝ ի սրբոց վարդապետաց եկե-  
ղեցւոյ , և յայժմուս իսկ քաջնթաց  
հովուաց և առաջնորդաց դատապար-  
տեալ , և նզովիւք չափ արդելեալ :

Ի այց քանզի յայժմեան ժամանա-  
կիս և՝ ի քիմն մերոցն ազգայնոց սկը-  
սանին տակաւ քաղցրանալ օտարութի-  
տեսարանք այլալեզու ազգաց անզգու-  
շից , և ընդ սակաւ քաղաքական օգ-  
տութեանցն սկսանին արդ մերքն և  
մեծամեծ վնասս յանձինս ձգել ան-  
տի՝ ի միտսն և՝ ի հոգիս , և փոքր միւս  
ևս համարձակեալ բուռն հարկանին  
մուծանել նմանօրինակս ինչ և յազ-  
դին մերում , զնոյն սովորութիւնս ա-  
սեմնոքիմք կարգօք , յորոց անշուշու-  
և բազում և անդարմանելի վնասուց  
գտցին ժառանգորդք մանկունք ազ-  
գիս իբր յանգէտս , զայս ամենայն ակն  
յանդիման և անպատճուակ տեսեալ  
մեր , փութամբ արդ զառաջս առնուլ  
չարեայն : Դովել գովեմք զյօժարա-  
մտութիւն ազգիս մերոյ՝ ի փոյթ վայե-  
լելոս յընտիր այս արուեստ և՝ ՚ի պի-  
տանի յոյժ՝ ՚ի զարգացումն . այլ առ  
նմին ցուցանեմք և զեծամեծ վնասգ  
սըն վնասուց՝ ՚ի թերուղիղ զիտումն

ունելոյ . միանգամայն առաջի առնեմք սիրողաբար և զհնարս ուղղութեանն 'ի սկզբան աստ , մինչև 'ի կողմն մի զմիտսն խոտորեցուցեալ :

Ի՞ւարդին յառաջիկայ :

### ԲԱՐՈՅՑԱԿԱՆ

ԽՆԱՑՑԻ ԽՈՍՔ

Իրած էաբաէիդ պատասխանը յանձն առ :

ԳԱՂԴԱՑԻ իշխանին մէկը , որ կարմիր մորուք մը ունի եղեր (1640ին ատեները) օր մը հենրիկոս Դ (թագաւորին առջելը կատակի համար կը հարցընէ իր պարտիզպանին (որ քարձէ եղեր բոլորովին) թէ դուն ինչո՞ւ մորուք չունիս : “Պարոն , կ'ըսէ պարտիզպանը . Վստուած ամենաբարին մարդկանց մորուք բաժնելու ատենը ես ուշ գնացի , ու կարմիր մորուքներէն զատ՝ մորուք չէր մնացած . ես ալ ըսի թէ Վստուած , ալ աղէկ է որ ամենեին մորուք չունենամ՝ քան թէ կարմիր մորուքի տէր ըլլամ , :

“Դիմնաս որ սա անունով մարդը շատ չարիք կը խօսի վրադ , ըսաւ մէկը ուրիշի մը : Իսկ անիկայ իր բանը գիտցող մարդ , դարձաւ , “Կատ կը զարմանամ , ըսաւ . վասն զի ամենեին միտքս չիդար թէ ես ան մարդուն բարիք մը ըրած ըլլամ , :

### ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Վանիկէ և գառնեակ :

Հըքնաւան գառնիկդ իմ սիրունակ Որ զմարբըդ շուրջ խայտաս 'ի մարդ , Յաւուր միում , ո՞չ , գիտե՞ս Օքնչ անցք անցցեն և ընդ քեզ .

Ուերես մոլար , ա՞չ , քեզ եղուկ , Գնայցես գառնիկդ իմ անմեղուկ Զայն արձակեալ զհետ հովուիդ Բնդ լեաւն ընդ ձոր և հովիտ :

Ուերես անկեալ արտալածիկ Գողոյն անջան լիցիս որսիկ . Վովեալ գայլոյն քանասար Լիցիս թերելս պատառ :

Ուղարզամիտ սիրուն գառնեակ Շակատագրին քում անտեղեակ , Ո՞չ , քեզ , յաւուր միում քեզ Որպիսի անցք հասցեն քեզ :

Դու գըգուանօք արդ ընդ մաքիս Եւ ընդ մօր քո համբոյր քըծնիս , Օի միամօր ես նորուն

Քաղցրիկ որդեակ և սիրուն , Եւ մինչ աձես ձիւնաքատակ Փայլուն գզաթիւդ այդ ըսպիտակ Վէր և խընամք ըզքե գան Պատանեկին ժըրածան :

Ո՞չ , ձեռն անգութ դարանակալ Վըրէ զերկաթն իւր ոխակալ Ի մէջ ծաղկանց ու 'ի մարմանդ Վ արել զդառնիկդ իմ 'ի սպանդ :

Եւ դու անյանց և անգիտակ Տացես համբոյր ձեռին վրիժակ , Որ ըզդանակն այն աչեղ Վըռէ 'ի սիրտ քո յանմեղ .

Եւ 'ի մահուդ իսկ առ նա հեզ Հանդարտ աչկունը դարձուսցես ...

Ո՞չ , որ ըզքեզ անդ չողքայ , Վիրտ վիմեղէն է նորայ :

Ուղարզամիտ քաղցր իմ գառնեակ Շակատագրին քում անտեղեակ , Ո՞չ , որպիսի անցք ընդ քեզ Ենցցեն յապայն թէ գիտե՞ս : . . .

Եւ դու մանկիկ , որ արդ կենացդ 'ի պարտէզ Օ անմեղ գառնիկդ 'ի ծաղը և յոզ ըլս գըգուես , Ուեր գիտիցես որ ձեռն ե քեզ պատրաստի .

Վ յւլ լեր անմեղ , հասցէ հրեշտակ

քեզ բարի :

ԹԱՒԵՐՆԱ